մի՛ նստցի ի քաղաքս այլ ելեալ գնասցէ, ապա թէ ոչ գնոսա եւս այսպէս հանիցէ ի կախաղանս։

Եւ այս երիցս անգամ այսպէս ապրստամբեցան, և կախեցան։ Վերջապէս գնացեալ արտաքոյ քաղաքին այս ապստամբ քահանայք զամարեցան իբր երեք հազար քահանայք և գնացեալ ի յայն Ֆրեմոնայ գիւղն ուր էին ֆրանկ Բորթուկէզք, յորս էին և այն Լաթին Պատրիարգն և երկու եպիսկոպոսքն և իւր քահանայք, և շուրջ պատեալ զգիւղին յանկարծակի յարձակեցան ի վերայ նոցա ի մէջ գիշերային թուֆէնկով, բրօք, և քարամբ սպանին զամենեսեանսն, և զտունսն այրեցին և ապա եկեալ մտին ի Կեօնտէր փոխեցին զՍիմոն կամ զԳլաւտիոյ թագաւորն և զայլն եղին. և ի յեկեղեցիս իւրեանց մուծին զնախնի մոլորաշաւիղ զաղանդն իւրեանց հռչակել զԴէոսկորոսութիւնն։

Եւ ահա այսպէս ապերախտ գտան հապէշքն, և յայնմհետէ մինչեւ ցայսօրս ատեն զազգն ֆրանկաց։

Այլ արդ՝ այժմ պատմեսցուք զկերպն սեղանոյ մեծամեծացն, զի այնոքիկ որ սպասաւորի ձեռօք ճաշեն զկերակուրն՝ ի խորս է, վասն զի յերկու կողմն սեղանոյն դիզեալ կայ այն կակուղ հացն իւրեանց ի վերայ միմեանց մինչեւ երկու թզաչափ բարձրութեամբ, ուստի եթէ տեարքն կամիցին եւս իւրեանց ձեռօքն ճաշել ոչ կարեն, զի ինքեանք նստեալ են, իսկ սպասաւորքն ի յոտս կալով հազիւ հասանին ձեռք նոցա ի խորս եղեալ կերակրոյն, և այսու պատճառաւ հարկաղրին սպասաւորի ձեռօք ուտել. զի ի սեղանս մեծամեծաց սովորութիւն է նոցա դիզել զհացս բազումս։ Այլեւս կերակուր եփողքն պարտին գալ և ներկայ գտանել ի սեղանի տեառն և նախ քան զսկսել ճաշել տեառն, այն եփողն առաջի տեառն նախ պարտի ճաշել զամենայն տեսակս կերակրոց, և ապա սկսանին տեարքն ճաշել։

Նա եւս սոքա դիւրին իր մի ունին իբրեւ զմաճուն շինեալ առ ի համս տալոյ կերակրոյ, զոր կազմեն և պահեն ի տան. և յորժամ պիտոյ լինի, դգալ մի դնեն ի նմանէ ի սան կերակրոյն, և պատուական համով լինի. և նիւթն է այս. նախ զթարմ զէնճէֆիլ որ անդ բուսանի առատապէս, զսոխ և զսխտոր, զկարմիր պղպեղն և զաղն, լոսեն ի միասին բարեպէս և խառնեն և լինի իբրեւ զմաճուն, և ի յամենայն տան առնեն զայս և իբր զբրովիժեօն (պահեստ) պահեն. և ի կերակուր եփելն ոչ աղ և ոչ այլ ինչ դնեն, այլ միայն յայն բաղադրեալ մաճունէն դնեն դգալ մի և լինի յոյժ համով պատուական կերակուր։

Իսկ ըմպելոյ գինին եւս շատ զարմանալի և շահաւէտ ինչ է. զմեղրն բերեն ի փեթակէն, և չափով ինչ դնեն ի կարասն, և նոյն չափովն վեցապատիկ դնեն ի կարասն զջուրն, ապա ծառոյ ինչ կեղեւ գոյ անդ, չորացուցանեն զայն կեղեւն և ծեծեն, և լինի մոխրագոյն փոշի. ի յայն փոշւոյ զերիս բուռս արկանեն ի կարասն, և հողոյ ցեխով և պնակաւ միով զբերանն կարասին ծեփեն, և շուրջ զկարասիս դիզեն զչոր քակոր կովու բազում, և ապա յերից կողմանց լուցանեն զհուրն մինչեւ սպառեսցին քակորքն, և մնայ այսպէս զերիս աւուրս մինչեւ պաղի և զտի. ապա բանան զբերան կարասին, և ի մեղրն եղեալ մոմն՝ յերեսն մաքրեալ և զտեալ կայ, հանեն նախ զմոմն, ապա ի փոքր կարասիս և ի թէստիս ածեն զմեղրագինին լնուն, և զիւրաքանչիւրոցն բերանն ծեփեն ցեխով, և դնեն ի գետնափոր տունս մինչեւ ցաւուրս հնգետասան։ Իսկ ի մեղրն եղեալ մեղուք և ճանճք և այլ աղտեղութիւնք, յատակս կարասին ժողովին, թափեն զայնոսիկ արտաքս. և յետ հնգետասան աւուրց սկանին ըմպել զայն մեղրագինին. բայց որպիսի՛ համ է, զի զամենայն ծաղկանց անուշահոտութիւնն ի քիմս և ի բերանս ունելով հրճուին ըմպողքն, այլեւս զուարճացուցանէ իբրեւ զժամս երիս կամ չորս, նաեւ զմիզի ճամբան բանայ, և յաճախակի միզէ. և ոչ որպէս զգինի խաղողոյ արբեցուցանէ. և